



Ազգաբարոյւթեան Trumpet's Sound **Վոյ**

49-րդ ՏԱՐԻ, ԱՆՍՏՐԱԼԻԱ
ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ 2018



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Վասն զի մարմնին վարժութիւնը ... **3**
Հովիւ Հրաչ Գույունեան

Ստեղծուած ենք Անոր հաճութեան
համար **4**
Բաֆֆի Չափարեան

Արդեօ՞ք դուն կ'աճիս (2) **7**
Ռէքս Տիրլալ

Տերոջ ընծայումը տաճարին մէջ ... **10**
Տոն Սրորմըր

Երկրորդը ըլլալու օրհնութիւնը (2) . **13**
Վարդան Սարգիսեան

Աղօթքի եւ փառաբանութեան Նիւթեր

- Աղօթէ՛ք մեր աշխատակիցներու եւ անոնց ընտանիքներու ապահովութեան համար:
- Աղօթէ՛ք 2018 թ.-ի նիւթական կարիքներու համար:
- Աղօթէ՛ք, որ Տէրը Կիւմրի քաղաքին համար աշխատակից մը ապահովէ:
- Աղօթէ՛ք կարիքաւոր ընտանիքներու եւ անոնց կարիքներուն համար:
- Աղօթէ՛ք 2018 թ.-ի մեր միսիոնարական խումբի այցելութեան համար:

Եթէ կը փափաքիք կանոնաւոր կերպով ստանալ մեր աղօթքի նամակը, ապա մեզ հետ կապ հաստատեցէ՛ք հետեւեալ հասցեով. info@acmaust.org:

Կազմի նկարը՝ Աւարթան, Ալագյազ գիւղ, 2017թ.,
Անժելա Յարութիւնեան

**«Վասն զի մարմնին վարժութիւնը քիչ բանի
օգտակար է, բայց աստուածպաշտութիւնը
ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ
եւ թէ՛ ապագայ կեանքին խոստումը ունի»**

Ա Տիմոթէոս 4:8

Նոր տարին՝ նոր ուժով: Ո՛չ, դուն հեծանիւի կամ արագացող վազք-
ուղի մեքենայի կարիք չունիս... թերեւս նոր Աստուածաշո՞ւնչ մը,
Աստուածաշունչի սերտողութեան խմբակի կամ կանոնաւոր եկեղեցի
յաճախելու որոշո՞ւմ մը:

Աստուածաշունչը յստակ կը սորվեցնէ, թէ պէտք է հաղորդակցուինք
միւս հաւատացեալներուն հետ, ոչ միայն սուրճ խմելու, այլ՝ Աստուա-
ծաշունչը սերտելու համար, ոչ թէ եկեղեցիի եւ հովիւի մասին խօսելու
համար, այլ՝ Աստուծոյ Խօսքին մէջ խորանալու եւ իրար Քրիստոսով
քաջալերելու համար: Ոմանք լաւ կը սկսին, նոյնիսկ ուրիշներուն կը
քաջալերեն մասնակցիլ այդպիսի սերտողութիւններու, բայց շուտով կը
նահանջեն եւ կը սկսին բացակայիլ: Այն նման է մարգասրահի վար-
ժանքներուն մասնակցիլ, եւ մի քանի շաբաթ անց ըսել, թէ այն շատ
ծանր էր:

Ես կը սիրեմ այս համարը. «Աստուածպաշտութիւնը ամէն բանի օգ-
տակար է» - Աստուած պաշտելու, Իր Խօսքը սերտելու, ուրիշներուն
հետ հաղորդակցուելու, ամէն բանի համար օգտակար է:

Ամէն անգամ, երբ եկեղեցական ճամբար կը յաճախենք, յայտագրին
մէջ առաւօտեան մենիկ պահի ժամ կ'ունենանք: Ասոր նպատակը մարդ-
կանց քունի մէջ չմնալու համար չէ, այլ՝ Տէրոջը հետ առանձնանալու
եւ Իր մասին խորհրդածելու, աղօթելու եւ Աստուածաշունչը կարդալու
համար է: Ի՞նչ գեղեցիկ պահ է օրը այդպէս սկսկիլ: Մենք շատ լաւ գի-
տենք հետեւեալ համարը.

«Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, վասն զի ձեր հակառակորդը սատանան՝
մոնչող առիծի պէս կը պտըտի ու կը փնտռէ թէ ո՛վ կ'լլէ.» (Ա Պետ. 5:8):

Այո՛, աշխարհը մեզ կրնայ շատ բաներով զբաղ պահել, եւ կը կար-
դանք, որ Յիսուս միշտ Իր աշակերտներէն կ'առանձնանար Իր Հօր
հետ հաղորդակցուելու համար:

Ի՞նչ կ'ըսես քու մասիդ: Ինչպէ՞ս կ'ընթանան հոգևոր մարմնավար-
ժութիւններդ, ե՞րբ պիտի սկսիս Հայր Աստուծոյ, Որդի Աստուծոյ եւ
Սուրբ Հոգի Աստուծոյ հետ հաղորդակցուիլը, ե՞րբ նուիրումով պիտի
որոշես յաճախել եկեղեցի եւ մասնակցիլ Աստուածաշունչի սերտողութե-
ան խմբակին եւ հաղորդակցուիլ միւս հաւատացեալներուն հետ:

Կեանքը նման է ալիքի, այն կարող է գալ եւ քեզ մէկդի շարտել: Թեր-
եւս պահ մը գայ ու ըսես թէ շատ մօտ էիր, բայց չզիտցար ինչ եղաւ:
Եթէ դուն անոնցմէ ես, ովքեր կը զգան որ շատ հեռու գացին, կրնա՞ս
արդեօք տեսնել Անոր լայն տարածուած սիրող բազուկները, որոնք քեզ
կը կանչեն ըսելով.

«Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ ես ձեզ պիտի
հանգչեցնեմ: Իմ լուծս ձեր վրայ առէք եւ ինձմէ ստրկեցէ՛ք՝ որ հեզ եմ ու
սրտով խոնարհ եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք, վասն
զի իմ լուծս քաղցր է եւ իմ բեռս թեթեւ» (Մատթ. 11:28-30):

Հ. Գ.

Ստեղծուած ենք Անոր հաճութեան համար (1)

Ծննդոց 1:1

Ո մանք կ'ըսեն թէ այս համարը Աստուածաշունչի ամենաշատ կար-
դացուած համարն է: Չնայած, հնարաւոր է մտածենք, թէ Յովհ.
3:16-ն է ամենաշատ կարդացուածը, սակայն ոմանք կը նշեն, թէ մար-
դիկ երբ ուզեն Աստուածաշունչը կարդալ, գլխաւորապէս կը սկսին
Ծննդոց 1:1-էն, թէեւ չ'աւարտեն ամբողջ Գրքի ընթերցանութիւնը:

Բայց եւ այնպէս, այս համարը մեծ նշանակութիւն ունի, եթէ պար-
զապէս կարողանանք ըմբռնել անոր ողջ իմաստն ու ճշմարտութիւնը:
Աստուածաշունչի մնացած մասը կը հենուի այս համարին վրայ: Իրա-

կանութեան մէջ, այն կառուցուած է անոր վրայ՝ մեզ Աստուծոյ մասին մանրամասներ հաղորդելու եւ օգնելու զինք աւելի լաւ հասկնալու, որպէս Արարիչ, նախախնամող, պահպանող, Փրկիչ եւ մեր Հայր:

Ուշադրութի՛ն դարձուցէք, որ Աստուածաշունչը կ'ըսէ թէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Նախքան Աստուծոյ՝ երկինքն ու երկիր ստեղծելը, Իրմէ զատ ոչինչ գոյութիւն ունէր: Աշխարհի եւ տիեզերքի մէջ ամէն բան՝ երեւելի եւ աներեւոյթ, գոյութիւն ունին միայն այն պատճառով, որ Աստուած ստեղծեց զանոնք (Կող. 1:16, Յովհ. 1:3, Եսայ. 45:12):

Կարելոր է իմանալ, թէ ինչու համար Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, եւ նաեւ՝ մեզ: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Աստուած բոլոր բաները ստեղծեց Իր հաճութեան համար: Այլ խօսքով, Աստուած բոլոր բաները ստեղծեց Իր վայելքին համար (Յայտ. 4:11):

Մենք գիտենք, որ Աստուծոյ հաճելի է Իր ստեղծագործութիւնը՝ բնութիւնը, քանի որ այն Աստուծոյ փառքը կը պատմէ (Սաղ. 19, Ծննդ. 1:4, 12, 18, 21, 25, Սաղ. 104, Սաղ. 104:31):

Սակայն ի՞նչ ըսենք մեր մասին: Արդեօք մենք հաճելի՞ ենք Աստուծոյ: Եթէ Ան է մեզ ստեղծողը, եւ այդպէս է, եւ եթէ մեզ ստեղծեց Իր հաճութեան համար, ապա մենք մեզի պէտք է հարց տանք, թէ արդեօք Աստուած կը հաճենա՞յ մեզմով:

Ինչպէ՞ս կրնանք Աստուծոյ հաճեցնել: Նախ եւ առաջ պէտք է կառուցենք հիմքը եւ մեր մէջ հաստատենք այն համոզմունքը, որ Աստուած է մեզ ստեղծողը (Ծննդ. 1:26, 1:27, 2:18, Կող. 1:16):

Աստուած ոչ միայն ստեղծեց մեզ, այլեւ ստեղծեց յատուկ նպատակի մը համար՝ Իր հաճութեան, Իր փառքին եւ պատուին համար (Եսայ. 43:7, 43:21, Սաղ. 149:4): Հետեւաբար, յաջորդ հարցը, որ մենք մեզի պէտք է տանք սա է. «Ինչպէ՞ս կրնամ Աստուծոյ հաճեցնել» (Յայտ. 4:11):

Առաջին՝ Աստուած կ'ուզէ, որ մենք Իր հետ հաղորդակցուինք: Ստեղծագործութեան սկիզբէն ի վեր Աստուած կ'ուրախանար մարդկանց հետ հաղորդակցուելով: Ան այդպէս ըրաւ Ադամի եւ Եւայի հետ (Ծննդ. 3:8-9), Ենովքի հետ (Ծննդ. 5:22): Աբրահամը Աստուծոյ բարեկամ կոչ-

ուեցաւ (Յակ. 2:23): Ուշադրութի՛ն դարձուցէք, որ Աստուածաշունչը կ'ըսէ թէ Աբրահամը հաւատաց Աստուծոյ, եւ միայն այն ժամանակ ան Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ:

Երկրորդ՝ Աստուծոյ հաճելի է, երբ Ան կը տեսնէ Իր զաւակներուն խաղաղութեան եւ միաբանութեան մէջ (Փիլ. 2:2, Սաղ. 133:1, Հռովմ. 12:16, Եփես. 4:3): Աստուծոյ հաճելի է, երբ մենք խաղաղութեան մէջ ենք իրարու հետ եւ միասնական ենք: Աստուած կ'ուզէ, որ ոչ թէ անընդհատ փոքր բաներու շուրջ վիճաբանինք, այլ զիրար ներելով՝ միասին աշխատինք ընդհանուր գործի՝ Աստուծոյ թագաւորութիւնը տարածելու համար:

Հետեւաբար, երբ մարդը Յիսուս Քրիստոսի միջոցով Աստուծոյ կը հաւատայ, ան կը դառնայ Աստուծոյ բարեկամը: Յովհ. 15:15-ի մէջ Տէր Յիսուսը Իր աշակերտներուն բարեկամներ անուանեց: Հետեւաբար, Աստուծոյ հաճելի է մարդու հետ հաղորդակցուիլը, երբ ան կը հաւատայ Իրեն եւ Յիսուսի միջոցով կը սկսի Իր հետ հաղորդակցուիլ:

Երրորդ՝ Աստուծոյ հաճելի է, երբ մեր կեանքով զինք կը փառաբանենք, կը պատուենք եւ կը փառաւորենք: Այդ կ'ըլլայ երկու ձեւով՝ դաւանելով եւ հնազանդելով:

Աստուծոյ հաճելի է, երբ կը դաւանինք Իր անունը, կամ մարդկանց կը յայտարարենք Իր ճշմարտութիւնները (Մարկ. 16:15, Ա Պետ. 3:15-16, Գործք 1:8):

Աստուծոյ հաճելի է, երբ կը հնազանդինք Իրեն (Մատթ. 5:16, Յովհ. 15:14, Յովհ. 14:15, Յովհ. 14:23): Մեր հնազանդութիւնը կը փառաւորէ եւ կը պատուէ զինք, եւ ատոր արդիւնքով Անոր հաճելի կը դառնանք:

Արդեօք Աստուծոյ հաճելի՞ ենք, թէ՞ ոչ: Անոր հետ հաղորդակցութիւնը, քրիստոնեաներու հետ համախմբուած ըլլալը, անոնց հետ խաղաղութիւն ունենալը եւ մեր կեանքով Անոր անունը փառաւորելը կը յանգեցնէ, որ Աստուած հաճենայ մեզմով:

Բա.Ֆ.Ֆի Չափարեան



Արդեօք դուն կ'աճի՞ս (2)

Բ Պետրոս 1:1-15

Ատուած մեզի աճելու կարողութիւն տուած է, քայց արդեօք կուզե՞նք աճիլ: Մենք համաչափ աճելու կարիք ունինք: Իւրաքանչիւր առաքինութիւն պէտք է հաւասարակշռուի՝ անոր վրայ աւելցնելով մէկ այլ առաքինութիւն: Ստորեւ կը ներկայացնենք քայլերու շարքը կամ բնատրութեան գիծերը, որոնք Պետրոս առաքեալը կ'առաջարկէ մեզի:

Հաւատք

Ասիկա մեր անձերը Աստուծոյ հօր բազուկներուն մէջ նետելու քայլ է, ու հաւատք առ այն, որ Ան մեզ Զրիստոսով փրկած է: Ան երբեք պիտի չլքէ մեզի, Ան պիտի շարունակէ պահել ու աջակցել մեզ ամէն օր:

Հաւատքիդ վրայ առաքինութիւն աւելցուր

Ասիկա բարոյական քաջութիւն է: Լաւ ու յարգարժան ընկեր ու քաղաքացի ըլլալ է: Յակոբոսը կը սորվեցնէ, թէ հաւատքը առանց բարոյական գործերու նման է անկենդան մարմնի: Պետրոսը նոյնը կ'ըսէ: Սակայն շուտով պիտի տեսնենք, որ միայն հաւատալն ու ճիշտ արարքներ գործելը բաւական չեն:

Առաքինութեանդ վրայ գիտութիւն աւելցուր

Ոչ միայն ճիշտ արարքներ պէտք է գործենք եւ ճիշտ բաներու պէտք է հաւատանք, մենք նաեւ պէտք է իմանանք թէ ինչու այդպէս կը հաւատանք և կը գործենք: Երբ մէկը մեզ կը հարցնէ, թէ ինչո՞ւ կը հաւատանք այն ինչին կը հաւատանք եւ ինչո՞ւ կ'ընենք այն բաները ինչ կ'ընենք, պէտք է կարողանանք բացատրել այդ բոլորը: Ասիկա քրիստոնեայ իւրաքանչիւր սերունդի մարտահրաւերն է. ոչ միայն փոխանցել հաւատքն ու գործերը, այլեւ՝ հաւատքի ու գործերու պատճառը:

Գիտութեանդ վրայ ժուժկալութիւն աւելցուր

Ասիկա մենք զմեզ վերահսկելու կարողութիւնն է: Ինչո՞ւ համար գիտութիւն ունեցող մարդիկ ասոր կարիք ունին: Ի՞նչ կը պատահի, երբ իմանանք բան մը, որ ուրիշը չի գիտէր, կամ մեր հասկցածէն տարբեր

կերպով կը հասկնայ: Կարող ենք անհամբերութիւն դրսեւորել կամ հրպարտանալ: Գիտելիքը առանց խոնարհութեան, համբերատարութեան եւ ժուժկալութեան կարող է մեծ վնասներ պատճառել:

Ժուժկալութեանդ վրայ համբերութիւն աւելցուր

Ովքեր երբեւէ նոր որոշում մը կայացուցած են կամ ուրիշ սննդակարգի անցած են, գիտեն թէ որքան հեշտ է սկսիլը: Իսկական փորձութիւնը շարունակելն է: Շատեր Քրիստոսին դառնալու որոշում կը կայացնեն: Մեկնարկը հրաշալի է, բայց մեր նպատակը յաղթական աւարտն է:

Համբերութեանդ վրայ աստուածաշտութիւն աւելցուր

Կարող ենք հնազանդ հաւատք, հիմնաւորուած գիտութիւն, ժուժկալութիւն եւ համբերութիւն ունենալ, բայց մի քանի տարի անց այդ ամէնը կարող է վերածուիլ գաղջ մարդկային ջանքի: Առանց աստուածապաշտութեան, Քրիստոսի հետ անձնական ջերմ փոխյարաբերութեան՝ մենք կը կորսնցնենք ի սկզբանէ մեզ համար շարժիչ ուժ հանդիսացող տեսիլքը:

Աստուածաշտութեանդ վրայ եղբայրսիրութիւն աւելցուր

Որքան աւելի մօտ ըլլանք Աստուծոյ, այնքան աւելի յօժարաբար, սիրով ու բարութեամբ կը ներգրաւուինք պարզ յարաբերութիւններու մէջ, աւելի յօժարաբար կը ներենք ուրիշներուն եւ մարդկանց առջեւ բարձր պատնէշներ չենք շարէր, որպէսզի ստիպուած ըլլան անոնց վրայով ցատկել մեզ հետ սովորական հաղորդակցութիւն ունենալու համար:

Եղբայրսիրութեանդ վրայ սէր աւելցուր

Ասիկա հոգեւորապէս աճելու գլխաւոր նպատակակէտն է: Կը տեսնէ՞ք, թէ Պետրոսի աճի արահետը մեզ ուր հասցուց, մեզ առաջնորդեց հոգեւորապէս աճելու բարձրագոյն նշանին: Ասիկա սէր տալու եւ ստանալու կարողութիւնն է: Իրարու հետ վարուելու ձեւը մեր հոգեւոր վիճակի ճշմարիտ փաստարկն է: Մարդկանց հետ փոխյարաբերութիւններուս մէջ

- անպայմանօրէն կը սիրե՞մ ու կընդունի՞մ իրենց,
- պատնէ՞շ, թե՞ կամուրջ կը կառուցեմ,
- կը դատապարտե՞մ,
- մարդկանց վիրաւոր հոգիներու համար սպեղանի՞ եմ:

Վիրաւոր հոգիով շատ մարդիկ կան: Եզեկիէլը Իսրայէլի կեղծ հովիւներուն հետեւեալ սուկայի խօսքերը ուղղեց. «Տկարները չուժովցուցիք ու հիւանդները չբժշկեցիք եւ կտրածը չփաթեցիք ու մոլորածը չդարձուցիք եւ կորսուածը չփնտռեցիք. հապա բռնութիւնով ու խստութիւնով անոնց վրայ տիրեցիք» (Եզեկ. 34:4):

Եթէ մարդը հոգեւորապէս տկար է կամ վիրաւոր, մի՞թէ դաժանութեամբ կամ բռնութեամբ կը վարուինք անոր հետ, թէ՞ կը զօրացնենք ու կը դարմանենք անոր վերքը: Երբեմն մենք քրիստոնէականերս շատ լաւ ենք ուրիշներուն սխալները մատնացոյց ընելու մէջ, բայց երբ հարցը բժշկելուն, վերքերը վիրակապելուն ու հոգեւոր առողջութիւնը վերականգնելուն կը վերաբերի, այնքան ալ խելամիտ չենք գտնուիր: Եզեկիէլը կ'ըսէ թէ Աստուծոյ համայնքին մէջ հոգեւորապէս տկարները պէտք է կ'ազդուրուին, իսկ վիրաւորները՝ վիրակապուին, ոչ թէ դատապարտուին:

Ո՞րն է հոգեւոր աճի նպատակը

Հոգեւոր աճը կը կանխէ մեր անարդիւնաւետութիւնն ու անպտղաբերութիւնը: Սա փուճ կեանքի հակառակն է: Առանց հոգեւոր աճի կոյր կամ կարճատես կը դառնանք մեր ինքնութեան նկատմամբ:

«Առատօրէն իրաւունք պիտի շնորհուի»: Ի՞նչ է այս առատ ընդունելութիւնը: Այս արտայայտութեամբ երբեմն կը նկարագրուէր, թէ ինչ տեղի կ'ունենար, երբ մարզիկները Յունաստան կը վերադառնային Ռոմիսիական խաղերու մրցոյթներէն ետք: Երբեմն կը քանդէին քաղաքի պարիսպի մէկ մասը՝ առանձնայատուկ, առատ ընդունելութեան համար: «Ձեզի առատօրէն իրաւունք պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Բրիստոսին յաւիտենական թագաւորութիւնը մտնել» (հմբ 11): Այն, որ կարող ենք Աստուծոյ երջանկութեան մասնիկը ըլլալ, մեզ համար անհասկնալի փառք է, բայց ճիշդ այս է առատ ընդունելութիւնը:

Ռէքս Տիրլալ

Հատուած՝ «Իսկապէ՞ս Աստուած բարի է» գիրքէն



Տէրոջ ընծայումը տաճարին մէջ

Ղուկաս 2:21-40

Յովսէփն ու Մարիամը հետեւեցին Օրէնքի ծէսերուն: Մանուկ Յիսուսը թլփատուեցաւ, իսկ Մարիամի մաքրուելու օրերը լրանալէն ետք Յիսուսին տաճարը տարին Տէրոջը ընծայելու համար:

Ի տարբերութիւն Յովհաննէսի թլփատութեան մասին Ղուկասի նկարագրածներուն, այստեղ, Ղուկասը միայն կը նշէ թէ Անոր կոչեցին այնպէս, ինչպէս հրեշտակը ըսած էր իրենց: Մենք կ'ենթադրենք, որ սա տեղի ունեցաւ Բեթլէհէմի մէջ: Նազարէթ վերադառնալը, ապա մի քանի շաբաթ անց տաճարին մէջ մաքրուելու ծէսերուն մասնակցելու համար Հրեաստան ետ գալը դիւրին պիտի չ'ըլլար:

Ղուկասը կրկին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն մարդկանց վրայ, ովքեր բծախնդրօրէն Օրէնքը կը պահէին: Նոյնը ըսուած է նաեւ Չաքարիայի եւ Եղիսաբէթի առնչութեամբ: Յովսէփն ու Մարիամը նոյնպէս նոյն զգուշութեամբ կը պահէին Օրէնքի կէտերը: 23-րդ համարը կ'ըսէ թէ մասնատրապէս ո՞ր պատուիրանը կը պահէին: Այնուամենայնիւ, գրեթէ առանց որևէ մէկ դիտատրութեան, Ղուկասը կ'ըսէ թէ Յովսէփն ու Մարիամը աղքատ էին: Անոնք մեծահարուստներու նման թանկարժէք գոհաբերութիւններ չբերին, այլ՝ գոյգ մը տատրակ: Կրնանք պատկերացնել Տէրոջ ընդունած ջրատրութեան աստիճանը:

Սիմէօն եւ Աննա

Ղուկասը շեշտը աւելի շատ կը դնէ տաճար եկած Սիմէօնի եւ Աննայի վրայ, քան՝ մաքրման ծէսերու վրայ: Մարիամին ուղղուած Սիմէօնի պատգամը, այնպիսի պատգամ մըն էր, որ ան երբեք պիտի չմոռնար:

Սիմէօնը աստուածավախ եւ արդար մարդ մըն էր, եւ Իսրայելի մխիթարութեանը կը սպասէր: Խոստացուած մխիթարութիւնը ոչ թէ իրադարձութիւն մըն էր, այլ անձ՝ Աստուծոյ Օծեալը: Սուրբ Հոգին Սիմէօնին յայտնած էր, թէ մահ պիտի չտեսնէ, մինչեւ Տէրոջը Օծեալը տեսնէ: Սուրբ Հոգին առաջնորդեց զինք տաճար մտնել ճիշտ այն պահին,

երբ Յովսէփն ու Մարիամը տաճար եկան Օրէնքի պահանջքները կատարելու համար:

Միմէօնի փառաբանութիւնն ու մարգարէութիւնը ցույց կուտան, որ ան Աստուծոյ շատ մօտ անձ մըն էր: Ան մանկանը իր գիրկն առաւ եւ փառաբանեց Աստուծոյ Իր՝ խօսքը կատարելու համար: Այժմ ուրախութեամբ եւ խաղաղութեամբ կարող էր հեռանալ այս կեանքէն: Ան տեսաւ Տէրոջ Փրկութիւնը, որ Աստուած պատրաստած էր իւրաքանչիւրի համար: Միմէօնին քաջ յայտնի էր, որ երբ Մեսիան գար, օրհնութիւն ու փրկութիւն պիտի բերէր, ոչ միայն Իսրայէլ ազգին, այլեւ՝ ողջ մարդկութեանը: Եսայեայ մարգարէն (42:6) խօսած է Տէրոջ ծառայի մասին որպէս մէկի, ով հեթանոսներուն լոյս պիտի բերէր: Միմէօնը հասկցած էր այս ճշմարտութիւնը՝ գիտակցելով, որ այս Անձը հեթանոսներուն համար՝ յայտնութեան լոյս եւ Իսրայէլ ազգին համար՝ փառքի նշան պիտի ըլլար:

Յովսէփն ու Մարիամը զարմացան Միմէօնի ըսած խոսքերէն: Կը թուայ թէ իրենցմէ որոշ ժամանակ պահանջեց ամիսներ առաջ հրեշտակի բերած պատգամը հասկնալու համար: Յովսէփին ըսուած էր, որ մանուկը Սուրբ Հոգիի միջոցով պիտի ծնէր, եւ որ Ան Իր ժողովուրդին իրենց մեղքերէն պիտի փրկէր: Մարիամին ըսուած էր, որ իր որդին, ով նաեւ Բարձրեալի Որդի կոչուեց, պիտի ժառանգէր Իր հօր՝ Դաւիթի աթոռը, եւ Անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենար: Իսկ հիմա իմացան, որ օրհնութիւնը շատ աւելի հեռու պիտի հասներ, եւ թէ այդ Մանկան շնորհիւ հեթանոսներն ալ պիտի օրհնուէին:

Միմէօնը Յովսէփին ու Մարիամին օրհնեց եւ իր գիրկին մէջ պահած մանկան մասին աւելի մանրամասնութիւններ հաղորդեց: Մանուկը Իսրայէլի մէջ շատ մարդոց իյնալուն ու ելլելուն համար կեցած էր: Այս առեղծուածային նախադասութիւնը պէտք է կապել Մատթ. 21:42-44-ի մէջ Տէրոջ մէջբերած եւ մեկնաբանած խօսքին հետ: Տէրը ատելցուց ըսելով. «Ով որ այս քարին վրայ իյնայ, պիտի կոտորտի եւ որու վրայ որ իյնայ պիտի փառքէ գանհկա»:

Իսրայէլի մէջ շատերը կը մերժեն, թէ Յիսուսը Մեսիան է: Անոնք կը սայթաքին ու վայր կ'իյնան խաչեալ Մեսիայի գայթակղութեան քարին վրայ: Միեւնոյն ժամանակ շատերը կը հաւատան: Հաւատացողները կը բարձրանան եւ կը փայլին երկնքի աստղերուն պէս: Տէր Յիսուսը

նաեւ հակառակութեան նպատակ մը ըլլալու համար կեցած էր: Տէրը բազում նշաններով ցոյց տուաւ Աստուծոյ Օծեալը ըլլալու փաստը, բայց Իր հակառակորդները զինք Բէեղզեբուղի հետ համագործակցող անուանեցին: Այնուամենայնիւ, այս կերպով շատերու սրտին մէջ եղածը պիտի բացայայտուէր:

Միմէօնը առանձնայատուկ պատգամ մը հղեց Մարիամին: Անոր սրտէն թուր մը պիտի անցնի: Մարիամի սիրտը ցաւով պիտի լեցուէր՝ Տէր Յիսուսին խաչի վրայ տեսնելով: Անոր մայրական սիրտը կսկիծով պիտի մորմոքէր:

Տաճարին մէջ գտնուող մէկ այլ աստուածավախ կին մը կար՝ Աննան: Ան խօսեցաւ մանուկի մեծութեան մասին: Աննա մարգարէուհին տաճարէն չէր գատուեր, հապա ծոմով եւ աղօթքով Աստուծոյ ծառայութիւն կ'ընէր: Որբեայրի էր գրեթէ ութսունչորս տարի, ու էրկանը հետ ընդամենը եօթը տարի անցուցած էր: Ան Աստուծոյ փառաբանեց Մանկան համար՝ հաւաստիացնելով, որ փրկութիւնը Անոր միջոցով է: Տաճարին մէջ մշտապէս գտնուիլը վկայութիւնն է այն բանին, որ ան Աստուծոյ նուիրուած կին մըն էր՝ երկրպագող, ծոմ պահող եւ աղօթող:

Մեզ համար այսօր

Տէրոջը նուիրուած մարդիկ ստրված են երկրպագութեան ուղին: Այն Անձը, որուն կ'երկրպագէին նոյն Աստուածն է, որուն առջեւ պէտք է խոնարհինք՝ ընդունելով, որ Ան մեզ համար մեռնելու եկաւ: Միայն Իրմով կարող ենք փրկութիւն ու մեր հոգիներու հանգստութիւն գտնել:

Տոն Սթորմըր

Եսայեայ 43:1-3

«Յիմա, ո՛վ Յակոբ, քեզ ստեղծողը ու ո՛վ Իսրայէլ, քեզ ձեւակերպող Տէրը այսպէս կ'ըսէ. «Սի՛ վախճար, վասն զի ես քեզ փրկեցի, քեզ քու անունովը կանչեցի. դուն իմս ես: Երբ ջորերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ, երբ գետերէն անցնիս, պիտի չընկղմիս, երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, բոցը քեզ պիտի չբռնկեցնէ: Քանզի ես՝ քու Տէր Աստուածդ՝ Իսրայէլի Սուրբը՝ քու Փրկիչդ եմ»:

Երկրորդը ըլլալու օրհնութիւնը (2)

Նախորդ յօդուածին մէջ տեսանք թէ ինչպէս Աստուած ընտրեց Մատթիային եւ չընտրեց Յուստոսին, եւ համաձայնութեան եկանք, որ երկրորդը ըլլալը չի նշանակէր օրհնութեան պակաս: Այստեղ պիտի նայինք երկու օրհնակներու, առաջինը՝ Հին կտակարանէն եւ երկրորդը՝ Նոր կտակարանէն եւ պիտի տեսնենք, թէ երկրորդը ըլլալը անպայմանօրէն չի նշանակէր, որ մենք անտեսուած ենք Աստուծոյ կողմէն:

Յետու եւ Քաղէք

Մովսէսէն ետք Աստուած Յետուին ընտրեց, որպէսզի Իսրայէլի ժողովուրդը առաջնորդէ: Ան դարձաւ Իսրայէլի երիտասարդ նորընտիր առաջնորդը: Բայց եկէ՛ք պահ մը կանգ առնենք ու մտածենք. ինչո՞ւ Աստուած ընտրեց Յետուին եւ ոչ թէ՛ Քաղէքին:

Մի քանի կէտերով կ'ուզեմ ցույց տալ, որ Քաղէքը ոչ մէկ բանով չէր գիջեր Յետուին:

- Երկուքն ալ Մովսէսի ընտրած լրտեսներու խումբին մէջ էին, ովքեր ուղարկուեցան խոստացեալ երկիրը լրտեսելու համար:
- Տասներկու լրտեսներէն Քաղէքն ու Յետուն միակն էին, ովքեր հնազանդեցան եւ հաւատացին, թէ Աստուած իրենց հետ էր: Միւս տասը լրտեսները եւ Իսրայէլի ժողովուրդը սարապիեցան եւ նոյնիսկ պատրաստուեցան Յետուին ու Քաղէքին քարկոծելու (Թուոց 14:10):
- Իրականութեան մէջ, այդ ապստամբութիւնը կանխողը Քաղէքը եղաւ եւ ոչ թէ Յետուն. «Եւ Քաղէք ժողովուրդը Մովսէսին առջեւ լռեցուց ու ըսաւ. «Աղէ՛կ, ելլե՛նք ու ժառանգենք զայն. քանզի մենք անշուշտ կրնանք անոր տիրել...» (Թուոց 13:31): Թերեւս Յետուն չխօսեցաւ, քանի որ Քաղէքը տարիքով իրմէ մեծ էր: Այդ ժամանակ Քաղէքը 40 տարեկան էր (Յետուայ 14:7):
- Երկուքն ալ իրենց հանդերձները պատռեցին, երբ ժողովուրդը պատրաստ էր նոր առաջնորդ ընտրել ու Եզիպտոս վերադառնալ (Թուոց 14:6):

- Քաղեքի անունը նոյնպէս հնչեց, երբ Աստուած խոստացաւ որ բոլոր պատերազմող մարդիկ պիտի չմտնեն խոստացեալ երկիրը, բացի Յեփոնէի որդիէն Քաղեքէ ու Նաւեի որդիէն Յեսուէ (Թուոց 14:30, 26:65):
- Իրականութեան մէջ Աստուածաշունչը աւելի Քաղեքի հնազանդութեան մասին կը խօսի, քան Յեսուի հնազանդութեան (Թուոց 14:24, Բ Օր. 1:36):

Ուստի, ո՞րն էր Քաղեքի ու Յեսուի տարբերութիւնը: Արդեօք քաջութի՞ւնն էր, համարձակութի՞ւնը, հնազանդութի՞ւնը... չեմ կարծեր, գուցէ հաւա՞տքը, չեմ գիտեր: Այնուամենայնիւ, մէկ բան վստահ գիտեմ, որ յաճախ երբ Աստուած մէկու մը կ'ընտրէ ծառայութեան համար, Ան չ'ըսէր թէ ինչու ըրաւ այդ ընտրութիւնը, այլ ցոյց կուտայ թէ ինչ նպատակի համար ընտրեց զանիկա: Ան պատճառը չի բացայայտէր, այլ՝ ծառայութեան դաշտը: Օրինակ, Պօղոսի պարագային, Աստուած Անանիային չըսաւ թէ Պօղոս ուսեալ մարդ էր, Գամաղիէլի ոտքերուն քով մեծցած փարիսեցի էր, Հռովմի քաղաքացի էր, մանկութենէն ի վեր Սուրբ-գրութիւնները գիտեր..., Ան Անանիային ըսաւ. «Գ-նա՛ դուն, վասն զի անիկա ինձի ընտիր աման մըն է, իմ անունս կրելու հեթանոսներուն ու թագաւորներուն եւ Իսրայէլի որդիներուն առջեւ, քանզի ես անոր պիտի ցուցնեմ թէ պէտք է իմ անուանս համար նեղութիւն կրէ»» (Գործք 9:15-16):

Միակ մեծ տարբերութիւնը, որը կարելի է նկատել Քաղեքի ու Յեսուի միջեւ այն էր, որ Յեսուն Մովսէսի ծառան էր, եւ միշտ անոր հետ կը գտնուէր (Ելից 33:11, 24:13-14) եւ աւելի երիտասարդ էր քան Քաղեքը:

Թուոց գրքին մէջ Յեսուի մասին կը կարդանք, որ ան կոչուած է Մովսէսի ծառան (Թուոց 11:28): Եթէ Յեսուի մասին գրուած է, որ ան Մովսէսի ծառան էր, ապա Քաղեքի մասին ըսուած է, որ ան Աստուծոյ ծառան է (Թուոց 14:24): Ո՞վ աւելի մեծ է: Մարդկայինօրէն եթէ մտածենք, ի հարկէ՝ Քաղեքը: Սակայն, անշուշտ Յեսուն նոյնպէս Աստուծոյ ծառան էր, բայց միտքը որ կ'ուզեմ շեշտել այն է, որ Քաղեքը ոչ մէկ բանով պակաս չէր Յեսուէն, սակայն կը տեսնենք, որ Աստուած Յեսուին ընտրեց եւ ոչ թէ Քաղեքին:

Ազգը առաջնորդելու համար թէ՛ Յեսուն եւ թէ՛ Քաղեքը համարձակ

կտրիճներ էին, վստահելի, Աստուծոյ վախը ունեցող մարդիկ էին, բայց տեսանք որ ան երկրորդը դարձաւ եւ ոչ թէ առաջինը: Ասիկա չի նշանակեր որ ան օրհնութիւն չունեցաւ:

- Արդեօ՞ք մեծ պատիւ չէ Քաղէբի համար, որ անձամբ Աստուծոյ կողմէ կոչուի Աստուծոյ ծառայ: Մենք նոյնպէս որպէս Նոր կտակարանի քրիստոնէականեր Աստուծոյ ծառաներ կոչուած ենք, սակայն նոյնիսկ ատելին՝ Աստուծոյ զաւակներ: Արդեօ՞ք սա սքանչելի օրհնութիւն մը չէ: Նոյնիսկ եթէ ուրիշներուն առաջնորդելու գործին մէջ չենք, կամ եկեղեցիին մէջ պատասխանատուութիւններ չունինք:
- Արդեօ՞ք սքանչելի չէ, որ Աստուածաշունչը Քաղէբի հնազանդութեան եւ կատարեալ հաւատքի մասին ատելի շատ կը խօսի քան Յեսուի հնազանդութիւնը:
- Արդեօ՞ք Աստուած Քաղէբին հողի կտոր չտուաւ, որպէս ժառանգութիւն: Ան ստացաւ Քէբրոնը որպէս ժառանգութիւն իր եւ իր սերունդի համար (Յեսուայ 14:13):

Անդրեաս եւ Պետրոս

Ի՞նչ կ'ըլլար, եթէ Տէր Յիսուսի աշակերտներու նեղ շրջանակը կազմուած ըլլար ոչ թէ երեք անձերէ այլ չորս՝ Յովհաննէս, Յակոբոս, Պետրոս եւ Անդրեաս: Անդրեասը կրնար ինքնիրեն մտածել ըսելով. «Եղբօրս եւ բերի Տէր Յիսուսի քով, հիմա ան դարձած է Անոր նեղ շրջանակի աշակերտներէն մէկը, իսկ ես դուրս մնացած եմ»:

Հետաքրքրական է նկատել, որ Նոր կտակարանին մէջ չենք հանդիպիր այսպիսի արտայայտութեան. «Յովնանի որդի Անդրեաս»: Պետրոսի մասին կը կարդանք. «Յովնանի որդի Սիմոն»: Անդրեասը միշտ կը յիշուի իր եղբօր անունով՝ «Պետրոսի եղբայր Անդրեասը»:

- Անդրեասը մեծ հրաշքներ չգործեց:
- Անդրեասը իր եղբօր նման Աւետարանը համարձակութեամբ չբարոզեց եւ մէկ քարոզով հազարաւորներու չբերաւ Տէր Յիսուսի քով:
- Ան Տէր Յիսուսի նեղ շրջանակի աշակերտներէն չէր, որ Տէրը միշտ Իր հետ կը տանէր:

- Ան Նոր կտակարանին մէջ ոչ մէկ գրութիւն չունի, ինչպէս Պետրոսը, Յովհաննէսը կամ Մատթէոսը:

Յստակ է, որ Անդրէասը առաջինը չէր, ան միշտ վարագոյրին ետեւէն կը գործէր: Արդեօ՞ք ան օրհնութիւն չունեցաւ, կամ արդեօ՞ք իր օրհնութիւնը աւելի պակաս էր: Եկէ՛ք անդրադառնանք անոր օրհնութիւններուն եւ մենք մեզի յիշեցնենք սաղմոսերգուի այս խօսքերը, որ կ'ըսէ. «Ո՛վ իմ անձս, օրհնէ՛ Տէրը ու այն ամէնը, որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ անունը: Ո՛վ իմ անձս, օրհնէ՛ Տէրը եւ անոր բոլոր բարերարութիւնները մի՛ սոռնար» (Սաղ. 103:1-2):

- Ան Տէր Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Արդեօք մեծ պատիւ չէ՞ տասներկուքէն մէկը սեպտիլ:
- Տէր Յիսուս ըսաւ. «Բայց երանի՛ է ձեր աչքերուն, որոնք կը տեսնեն ու ձեր ականջներուն, որոնք կը լսեն, քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ շատ մարգարէներ եւ արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել ու չտեսան եւ ձեր լսածները լսել՝ ու չլսեցին»: Անդրէասը այդ երանելիներու խումբին կը պատկանի:
- «Քաղաքին պարիսպը տասներկու հիմեր ունէր: Անոնց վրայ Գառնուկին տասներկու առաքեալներուն [տասներկու] անունները գրուած էին» (Հայտ. 21:14). Արդեօ՞ք մեծ օրհնութիւն չէ, որ քաղաքի հիմերէն մէկը կոչուած է Անդրէասի անունով:

Տէրը մեզ համար նոյնպէս մեծ օրհնութիւններ պահած է, եթէ հաւատարմաբար ապրինք եւ ծառայենք Իրեն: Մենք մեզի միշտ պէտք է յիշեցնենք սուրբգրային այն պարզ սկզբունքը, թէ եթէ քիչի մէջ հաւատարիմ ենք, Աստուած մեծ բաներու վրայ պիտի կարգէ մեզ:

Անկախ թէ ինչպիսի ծառայութիւն կ'ընես եկեղեցիին մէջ, անկախ մեծ է թէ փոքր, միշտ յիշէ որ դուն քու ծառայութեանդ մէջ առաջինն ես, Աստուած քեզ առաջինը կը տեսնէ, Ան միշտ այդպէս տեսած է: Ուստի «Իմ սիրելի եղբայրներս, հաստատո՛ւն եւ անշա՛րժ կեցէք եւ ամէն ատեն աւելցէ՛ք Տէրոջը գործին մէջ, գիտնալով թէ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով» (Ա Կորնթ. 15:58):

Վարդան Սարգիսեան